Սեյրանուշ Մանուկյան

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՌՈՒՄԻՆԱՀԱՅԵՐԻ ՆՎԻՐԱԾ № 9510 ԱՎԵՏԱՐԱՆԸ[1]

Բանալի բառեր. ձեռագիր, կիլիկյան մանրանկար, անցումային շրջան, հայկական, օրինակ-նմուշ, պատկերագրություն, Ղրիմ, ռումինահայ:

Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ Մատենադարանին (այսուհետև՝ Մ.) Ռումինիայից նվիրված 42 հայկական ձեռագրերի թվում № 9510 Ավետարանը (նկ. 1-9) աչքի է ընկնում պատկերների շքեղությամբ: Չի պահպանվել Ավետարանի հիշատակարանը: Սակայն փայլուն գիրը, ոսկու օգտագործումն ու ռելիեֆային տեխնիկան, պատկերների կատարման ոճն ու վարպետությունը, դեկորատիվ հարդարանքը օժտված են այնքան բնորոշ նկարագրով, որ թույլ են տալիս որոշարկել այն որպես կիլիկյան ձեռագիր: Ավետարանը պահվել է Ռումինիայում՝ Մոլդովայի Բոթոշան քաղաքի հայ համայնքում, ինչի մասին հայտնում է Ս. Քոլանջյանը, որն առաջինն է նկարագրել Ռումինիայից Հայաստան բերված ձեռագրերը: Նա հայտնել է նաև այն կարծիքը, որ Ավետարանը, ըստ երևույթին, պատկերազարդել է XIV դ. կիլիկյան նկարիչ Սարգիս Պիծակը[2]: Տվյալ կարծիքը ինքնաբերաբար, առանց հետազոտման, ընդունվել է այլ մասնագետների կողմից[3]: Ձեռագիրը երբևէ չի հրապարակվել և չի հետազոտվել: Մեր նպատակն է ներկայացնել և հրապարակել ձեռագիրը, վերլուծել նրա մանրանկարների պատկերագրությունը, ոճը և հարդարանքը, ինչը հնարավորություն կտա ավելի ստույգ որոշարկել Ավետարանը: Բացի այդ, մանրանկարների համեմատական ուսումնասիրությունը վեր է հանում ձեռագրի կարևոր նշանակությունը Ղրիմի և Ռումինիայի (Մոլդովայի) հայկական համայնքների արվեստի համար, ինչի բացահայտումը նույնպես տվյալ հոդվածի խնդիրներից մեկն է:

Ձեռագրի չափերն են՝ 18x13,5x7,2 սմ: Այն ունի 328 թերթ [մագաղաթ և թուղթ (6 թերթ)], ներառում է չորս ավետարանների տեքստը, ավետարանական ընթերցվածների սկիզբը (կոչվում են «աւետարանք գլխաւորք»)[4] նշող բալագույն թանաքով նկարված գրաֆիկական լուսանցազարդերը (նկ. 5), ավետարանիչների գեղանկարչական դիմանկարները (նկ. 1, 3, 6, 8) և չորս ավետարանների անվանաթերթերը (նկ. 2, 4, 7, 9): Բացակայում են խորանները:

Առաջին հայացքից Ավետարանի մանրանկարչությունը իսկապես հիշեցնում է Սարգիս Պիծակի ոճը (նկ. 13-17): Ավետարանիչների կերպարները և անվանաթերթերի

Հոդվածը ներկայացվել է 01.05.2019 թ., գրախոսվել է 24.05.2019 թ., ընդունվել է տպագրության 12.06.2019 թ.:

[1] Սույն հոդվածը 2013 թ. Բուխարեստում «International Conference on Romanian-Armenian Cultural Heritage» միջազգային գիտաժողովում ներկայացված զեկուցման վերամշակված տարբերակն է: Տե՛ս Manukyan S., Gospel No. 9510 Donated to the Armenian Institute of Ancient Manuscripts (“Matenadaran”) by the Armenians of Romania, International Conference on Romanian-Armenian Cultural Heritage, Bucharest, 29 October -2 November 2013, Paper Abstracts, pp. 36-37.

[2] Տե՛ս Քոլանջյան Ս., Ռումինահայերի արժեքավոր նվերը Հայաստանի Մատենադարանին, «Բանբեր Մատենադարանի», 1956, № 3, էջ 222:

[3] Տե՛ս Գէորգեան Ա., Հայ մանրանկարիչներ. մատենագիտություն (IX-XIX դդ.), Գահիրէ, 1998, էջ 658; t Buschhausen Heide und Helmu, Korchmasjan Emma, Armenische Buchmalerei und Baukunst der Krim: Tafeln, Erevan, 2009, S. 57.

[4] Տե՛ս Манукян С.С., Роль рубрикации в декоративной системе армянских Евангелий, Хризограф, вып. 3, Труды международной научной конференции, Москва, 5-7 сентября 2005 г. Москва, 2009, с. 443-455; Մանուկյան Ս.Ս., Ռուբրիկավորման դերը հայկական ձեռագիր Ավետարանների դեկորատիվ համակարգում, «Էջմիածին», 2005, դեկտեմբեր, էջ 55-66; Manukyan S.S., le rôle de la rubrication dans le système décoratif des évangiles Arméniennes, RE Arm, 38, 2018-2019, p. 85-101.

մոտիվները, օգտագործված զարդանախշերի բնույթն արդեն տարբերվում են XIII դ. 50-80-ական թթ. կիլիկյան մանրանկարներից: Դրանք ավելի հարթային և սխեմատիկ են: Այստեղ ավելի ուժեղ է գծային սկզբունքը, երկրաչափականացումը և ձևերի պարզեցումը՝ Պիծակի ստեղծագործությանը բնորոշ գծերը[1]: Միաժամանակ տվյալ հատկանիշները դեռ նոր-նոր են ձևավորվում, չեն հասցված առավելագույն արտահայտության, չեն դարձել կլիշե, ինչպես Պիծակի մոտ: Ոճի առումով մեր Ավետարանի մանրանկարները միջանկյալ տեղ են գրավում XIII դ. 70-80-ական թթ. կիլիկյան արվեստի «շքեղ» ոճի և Սարգիս Պիծակի ստեղծագործության միջև: Այսինքն՝ դրանց ստեղծման ժամանակը համապատասխանում է 1290-ական թթ. - XIV դ. սկիզբ ձգվող «անցումային» շրջանին՝ մինչև Սարգիս Պիծակը[2]: Դրա մասին են վկայում և՛ ավետարանիչների պատկերագրությունը և՛ մանրանկարների կերպարային համակարգը: Դիտարկենք № 9510 Ավետարանի մանրանկարները՝ համեմատելով դրանք «շքեղ» ոճի, «անցումային» շրջանի և Սարգիս Պիծակի նմուշների հետ:

Պատկերների կազմի առումով մեր ձեռագիրը հարում է 1290-ական թթ. - XIV դ. սկիզբ «անցումային» շրջանի Ավետարաններին (տե՛ս Մ. №№ 5736, 5784, 10740, Սարգիս Պիծակի հայր Գրիգորի 1297 թ. 7663, 9450, 242 [3]): Այդ ժամանակ վերանում են էջով մեկ և տեքստի հետ համատեղված սյուժետային մանրանկարները, չկան և սյուժետային լուսանցապատկերները, որոնք վերածնվում են Սարգիս Պիծակի ստեղծագործության մեջ[4]:

Ավետարանիչների դիմանկարների շրջանակները դրսից ունեն զարդանախշեր (նկ. 1, 3, 6, 8), որ բնորոշ էին «շքեղ» ոճին, գրեթե վերանում են «անցումային» շրջանում, իսկ Պիծակի ժամանակ առհասարակ չեն հանդիպում: Դրանք կազմված են նուրբ գծանկարված, ասես «թափանցիկ» գալարներից, «բեղիկներից», փշերից և ոճավորված բուսական մոտիվներից (տե՛ս Մատթեոսի դիմանկարը, 1289 թ. № 197 Մ.[5], նկ. 10): Դիտարկվող ձեռագրում դրանք այնքան զարգացած չեն, որքան «շքեղ» ոճի ժամանակաշրջանում, բայց տվյալ տարրերի առկայությունն (շրջանակներում և գլխազարդերում) արդեն վկայում է մանրանկարների՝ Պիծակի ժամանակից ավելի վաղ ծագման մասին:

Այդ հաստատում է և մեր ձեռագրում օգտագործված ռելիեֆային ոսկու տեխնիկան (նկ. 3), որը տարածված էր կիլիկյան մանրանկարչության մեջ XIII դ. 50-80-ական թթ. և հետզհետե անհետացավ մինչև Պիծակի ժամանակաշրջանը[6]:

Սովորաբար Սարգիս Պիծակը մանրանկարի կառուցվածքի մեջ ներառում էր գործող անձանց մակագրությունները, մեր ձեռագրում մակագրություն կա միայն Հովհաննեսի դիմանկարում (նկ. 9, 13): Հատուկ անդրադառնանք № 9510 ձեռագրի ավետարանիչների դեմքերին: Առաջին երեք ավետարանիչներն ունեն ընդհանուր տիպաժ՝ պատկերատիպ (նկ. 1, 3, 6): Դիմագծերը շեշտված են ստվերներով, ինչը դրանք ավելի ար-

---

[1] Տե՛ս Ղազարյան Վ., Սարգիս Պիծակ, Ե., 1980, էջ 68-73, 110-134; Казарян В.О., Манукян С.С., Матенадаран: Армянская рукописная книга VI-XIV веков, т. 1, Москва, 1991, с. 199-214; Der Nersessian S., Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia from the Twelfth to the Fourteenth Century, Vol. 1, Text, Washington, 1993, p. 142-153; «Treasures in Heaven, Armenian Illuminated Manuscripts», ed. by T.F. Mathews & R. S. Wieck, N.Y., 1994, p. 81-83 (H.E.),185-186 (T.M.), 208-209 (A.T.); Մանուկյան Ս., Սարգիս Պիծակ, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Ե., 2002, էջ 897-898:

[2] Տե՛ս Казарян В.О., Манукян С.С., նշվ. աշխ., էջ 186-201:

[3] Այս ձեռագրերի նկարագրությունը տե՛ս. № 242՝ «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անվան մատենադարանի», հ. Ա, կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Ձեյթունյան, Փ. Անթաբյան, Ե., 1984, էջ 1058-1062; № 5736՝ «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան մատենադարանի», հ. Բ, կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Ձեյթունյան, Փ. Անթաբյան, ցանկերը և համեմատական տախտակները՝ Օ. Եգանյանի, խմբագրությունը՝ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի, Ե., 1970, էջ 174; № 5784՝ նույն տեղում, էջ 183; № 7663՝ նույն տեղում, էջ 582; № 9450՝ նույն տեղում, էջ 931; №10740՝ «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան մատենադարանի», հ. Գ, կազմեց՝ Ա. Մալխասեանը, խմբագրությամբ՝ Ա. Տէր-Ստեփանյանի, Ե., 2007, էջ 186; Казарян В.О., Манукян С.С., նշվ. աշխ., էջ 252, 253,255,256:

[4] Տե՛ս Казарян В.О., Манукян С.С., նշվ. աշխ., էջ188, 201, 203:

[5] Տե՛ս նույն տեղում, էջ 180, պ. 340:

[6] Տե՛ս նույն տեղում, էջ 130, 146:

տահայտիչ է դարձնում: Քիթը ճիշտ ուրվագծված է: Հոնքերը կորացած են քթարմատի մոտ, դրսից վերջավորություններով իջնում են ներքև, փոս ընկած քթարմատի մոտ պայմանական աղեղով միացված են իրար: Այդ ձևը անհատականացնում է կերպարները: Կոպերը գծագրված են վերևից և ներքևից՝ ստեղծերով «պոչիկներ» և մեծացնելով աչքերը: Ստորին շուրթը կարմիրով է արտահայտված: Դեմքի մոդելավորման համար օգտագործված են գունաստվերը, լուսավոր և մութ մասերի հակադրությունը, Մարկոսի դիմանկարում՝ այտերի թեթևակի կարմրությունը: ***Դեմքերի*** այդ տիպը հանդիպում է «անցումային» շրջանի ձեռագրերում, ինչպես օրինակ՝ XIII դ. վերջի № 10740 Մ.[1] և 1297 թ. Բեյրութի Arisdaghesian Collection[2] Ավետարաններում (նկ. 11): Վերջինիս ավետարանիչների դիմանկարների շրջանակների շուրջ պահպանվել են և մեր ձեռագրին հարազատ «արտաքին» զարդանախշի տարրերը: Տվյալ ձեռագրերի ավետարանիչները ավելի պլաստիկ պատկերմամբ ***մոտ են*** մեր ձեռագրի դիմանկարներին նաև պատկերագրական տարբերակներով: Հանուն արդարության հարկ է նշել, որ դեմքերի վերը նկարագրված պատկերատիպը օգտագործել է և Սարգիս Պիծակը, մասնավորապես Մ. № 5786 Արքունական Ավետարանում, սակայն ոչ պլաստիկ, սխեմատիկ կատարմամբ[3]:

Մինչև Սարգիս Պիծակը կիլիկյան մանրանկարչության մեջ կուլակով (տոնզուրով) պատկերում էին միայն Ղուկաս ավետարանչին, ինչը կանոնական էր[4] (նկ. 12): Սարգիս Պիծակի պատկերազարդած ձեռագրերում, բացառությամբ մեկի (Մարկոսը № 5786 Մ.), կուլակով ներկայացված են առաջին երեք ավետարանիչները՝ համատես (սինոպտիկ) ավետարանների հեղինակներ Մատթեոսը, Մարկոսը և Ղուկասը (տե՛ս Մ.№№ 7651, 7631, Երուսաղեմ 1949, Ա. Բալաթ.-Ստամբուլ 1930 և Երուսաղեմ 2649[5], նկ. 13-17): Դա համապատասխանում էր «անցումային» շրջանում սկսվող և Պիծակին հատուկ միտմանը՝ գործող անձանց պատկերատիպերը միասնականացնել. ի հայտ է գալիս ավետարանչի, առաքյալի, կույրի, թռչնի և այլ պատկերների ընդհանրացված պատկերատիպը[6]: Դիտարկվող № 9510 Մ. Ավետարանում կուլակով ներկայացված է միայն Ղուկաս ավետարանիչը (նկ. 6), ինչը դեռևս պահպանվում էր «անցումային» շրջանում և վկայում է մանրանկարների «նախապիծակյան» ծագման մասին:

Այժմ անդրադառնանք յուրաքանչյուր ավետարանչի պատկերագրությանը[7]: Մատթեոսը, Մարկոսը և Ղուկասը ներկայացված են «նստած» ավետարանիչների կերպարանքով՝ համապատասխան հասակով, կանոնական ֆիզիոգնոմիկ առանձնահատկություններով (նկ. 1, 3, 6, 8): Մատթեոսը պատկերված է «գրելիս», Մարկոսը՝ «խորհելիս», Ղուկասը՝ «կեցվածք ընդունելիս»: Հովհաննես ավետարանիչը պատկերված է Պատմոս կղզում՝ կանգնած, իր նստած աշակերտ Պրոքորոնին թելադրելիս: Այս հայտնի պատկերագրական սխեմաներն ունեն տարբերակներ, պայմանավորված հետևյալ հատկանիշներով. արդյոք պատկերված են երկնակամարի սեգմենտը, աստծո աջը, ներշնչանք-«մուսան» հրեշտակի տեսքով [տվյալ տարրերը բնորոշ են Պիծակին, մեր ձեռագրում՝ միայն Հովհաննեսի դիմանկարին (նկ. 8, 13-16), արդյոք կան մակագրություններ, վարագույրը, ճարտարապետական շինությունները], ինչ դիրքով են ներկայացված ձեռքերը, ոտնաթաթերը, ինչպիսին են ավետարանիչների նստարանները, նրանց վրայի և ոտքերի տակի բարձերը, գրիչների աշխատանքային սեղանիկներն ու գործիքները, գրակալը գրքով և այլ խորհրդանշաններ ու ատրիբուտներ: Պատկերագրական

---

[1] Տե՛ս Казарян В.О., Манукян С.С., նշվ. աշխ., էջ 190, պ. 356, էջ 192, պ. 358:

[2] Տե՛ս Der Nersessian S., Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia from the Twelfth to the Fourteenth Century, Vol. 2, Illustrations. Washington, 1993, Ill, p. 532-535.

[3] Տե՛ս Казарян В.О., Манукян С.С., նշվ. աշխ., էջ 205, պ. 387:

[4] Տե՛ս Ղազարյան Վ., Ավետարանիչների պատկերագրությունը 14 դ. կիլիկյան մանրանկարչության մեջ, The second international Symposium on Armenian Art, Vol. 4, Yerevan, 1978, էջ 83, 92, հղում 7 (Reallexikon zur byzantinischen Kunst, Lief. 12, Stuttgart, 1969, S. 484):

[5] Տե՛ս Der Nersessian S., նշվ. աշխ., հ. 2, պ. 585-588, 590-591:

[6] Տե՛ս Ղազարյան Վ., նշվ. աշխ., էջ 88, 133; Казарян В.О., Манукян С.С., նշվ. աշխ., էջ 203:

[7] Տե՛ս Friend A. M., The Portraits of the Evangelists in Greek and Latin Manuscripts, Art Studies, Medieval, Renaissance & Modern, Cambridge, 1927; Nilgen U., Evangelisten, Lexikon der christlichen Ikonographie, Erster Band, S. 696-713; Der Nersessian S., նշվ. աշխ., հ. 1, էջ 135, 141,143-144:

տարբերակները կանխորոշվում էին նախատիպերով, որոնց նկարիչները խստորեն հետևում էին: Մեր ձեռագրին մոտ պատկերագրական տարբերակներ են 1293 թ. № 5784 Մ. Ավետարանի ավետարանիչների՝ մասնավորապես Մատթեոսի և Ղուկասի[1] դիմանկարները և հատկապես XIII-XIV դդ. № 9450 Մ. Ավետարանի առաջին երեք ավետարանիչների կերպարները, որոնց շրջանակների շուրջ նաև, ինչպես և մեր ձեռագրում, պատկերված են զարդանախշեր (նկ. 12): Այստեղ համընկնում են ոչ միայն ավետարանիչների պատկերագրական տիպերը, այլև նրանց շրջապատող միջավայրի բոլոր առարկաները: Մեր ձեռագրի նման՝ ***բացակայում են Սարգիս Պիծակի ավետարանիչներին բնորոշ երկնակամարի սեգմենտը, աստծո աջը և հրեշտակ-մուսան:***

Մեր խնդրո առարկա՝ XIII-XIV դդ. սահմանագծին, պատկերագրության տարբերակների նախատիպերը դառնում են *օրինակ-նմուշներ* և հետզհետէ՝ ***կլիշեներ***, որոնք ընդօրինակվում են և բազմացվում: Այդուհանդերձ, տարբեր հեղինակների մանրանկարներում կատարման տարբեր ոճի և պերսոնաժների կերպարային տարբեր բնույթի պատճառով պատկերները պետք է իրար նման չլինեն: № 9510 Մ. Ավետարանի ***Մատթեոսի, Մարկոսի և Ղուկասի դիմանկարները տարբերվում են Սարգիս Պիծակի պատկերներից ինչպես պատկերագրական տեսակով, այնպես էլ ոճով և կերպարային բնութագրով*** (նկ. 1, 3, 6, 8, 14, 15, 16): Դրանք տարբերվում են և Պիծակի նկարչական տեխնիկայից, որի մեջ վերանում են լեսիրովկաների շերտերը, որ այդքան հարստացնում էին «շքեղ» ոճի պատկերները և մասամբ պահպանվում էին «անցումային» շրջանում, այդ թվում և մեր քննության առարկա ձեռագրում, ուր մոդելավորման համար օգտագործված է գունաստվերը: Ուստի վստահաբար կարող ենք հետևություն անել, որ ձեռագիրը Սարգիս Պիծակը չի պատկերազարդել, դա վերաբերվում է և Հովհաննես ավետարանչի դիմանկարին, քանի որ այն, ելնելով ձեռագրագիտական հետազոտությունից, չի ավելացված հետագայում, այլ սկզբնապես ձեռագրի մաս է եղել:

Չնայած շրջապատի գրեթե նույնական առարկաների՝ գրակալ, վարագույր, նստարան, մութաքա-բարձեր, ճարտարապետական մոտիվներ, x-անման զարդանախշեր, որոնք պայմանականորեն փոխարինում են առարկաների որոշ հատվածներ, Պիծակի ավետարանիչների դիմանկարները «անցումային շրջանի» համեմատ մաքսիմալ սխեմատիզացված են: Ուրվագծի դերը ուժեղացված է, գույներն ավելի որոշակի են, գծանկարը՝ կոշտ: «Անցումային» շրջանի նմուշների հետ ծալքավորման ընդհանուր սխեմաները կլիշեացված են՝ անցնելով ձեռագրից ձեռագիր: Մոդելավորող գծերն ու մանրագծերը մոտեցված են բանաձևերի: Դրանց ուրվագծերը ստացել են երկրաչափական ձևեր: Դեմքերը միասնականացված են, դրանց համար նույնպես ստեղծված են տիպաժների մի քանի կրկնվող կլիշեներ: Այդպիսի կլիշեացված կերպարների համար ընտրված է մեր № 9510 Մ. Ավետարանի Հովհաննեսը՝ Պրոքորոնի հետ (նկ. 8): Այն հայտնվում և կրկնվում է «անցումային» շրջանի վերջին ձեռագրում՝ 1317-1318 թթ. № 242 Մ. Նոր Կտակարանի Հովհաննես ավետարանչի սխեմատիկ կերպարում: Վերջինի ավետարանիչների դիմանկարները որոշ մասնագետներ համարում են մատյանի գրվելուց ավելի ուշ Սարգիս Պիծակի նկարած էջեր[2] (նկ. 13): Այն ի հայտ է գալիս և Սարգիս Պիծակի Հովհաննես ավետարանչի հետագա պատկերներում (նկ. 8, 13): Հովհաննես ավետարանչի պատկերագրական տարբերակը չնչին տարբերություններով, ավելի չոր ոճով կատարված, Պիծակը գործածել է հետևյալ Ավետարաններում. Մ. №№ 7631, 5786, 7651 , Galata Library 57, Venice Mekhitarian Library 16[3]: Հենց այդ հանգամանքը՝ մեր ձեռագրի Հովհաննեսի Պրոքորոնի հետ պատկերն է, որ առիթ է տվել ենթադրելու, թե Մ. № 9510 Ավետարանի մանրանկարների հեղինակը կարող էր լինել Սարգիս Պիծակը:

---

[1] Տե՛ս Казарян В.О., Манукян С.С., նշվ. աշխ., 189, պ. 353. 354; Der Nersessian S., նշվ. աշխ., հ. 2, էջ 529-530.

[2] Տե՛ս Der Nersessian S., նշվ. աշխ., հ. 1, էջ 144: Այստեղ հայկական մանրանկարչության գիտակ Ս. Տեր-Ներսեսյանը ենթադրում է, որ ավետարանիչների դիմանկարները ստեղծվել են Սարգիս Պիծակի կողմից և ավելացվել ձեռագրի ստեղծումից հետո: Ա. Գևորգյանը ավետարանիչների կատարման ոճը նմանեցնում է Պիծակի ոճին: Տե՛ս նաև Գէորգեան Ա., նշվ. աշխ., էջ 100:

[3] Տե՛ս Der Nersessian S., նշվ. աշխ., հ. 2, պ. 593:

Ի ուրախություն մեզ, ղրիմահայ միջավայրում ստեղծված ձեռագրերի մեջ մենք հայտնաբերեցինք ևս երկու Ավետարան՝ Մ. № 318[1] և № 7699[2] (նկ. 18-33), որոնք ստեղծված են ըստ մեր Ավետարանի հետ ընդհանուր օրինակի, ավելի ստույգ՝ մեր ձեռագիրն է նրանց համար օրինակ-նմուշ եղել: Ավա՛ղ, այստեղ նույնպես չեն պահպանվել հիմնական հիշատակարանները (№ 318 Ավետարանում պահպանվել է միայն գրչության ժամանակի՝ ԺԴ դարի ստացող՝ Վարագի (Վասպուրական) Սուրբ Նշան եկեղեցու վարդապետ Սեթի հիշատակարանը, իսկ № 7699 Ավետարանում՝ 1582 թ. կազմողի հիշատակարանը և պահպանակի վրա՝ 1713 թ. Կաֆայի նկարիչ Ստեփանոսի հիշատակարանը): Դրանք թվագրվում են XIV դ. կեսերով[3]: Ակնհայտ է, որ երկու ձեռագրերում էլ ավետարանիչների դիմանկարները և տիտղոսաթերթերը ճշտորեն ***կրկնում են մեր Մ. № 9510 Ավետարանի նմուշները:***

Մ. № 318 Ավետարանի պահպանվածությունը գերազանց է, այն հնարավորություն է տալիս նույնիսկ վերականգնել մեր քննության նյութ Ավետարանի վատ պահպանված հատվածները: Ավետարանիչների դիմանկարներում (նկ. 18-25) նույնն են ինչպես պատկերագրական սխեմաները, այնպես էլ արտաքին զարդանախշերով շրջանակները[4]: Տարբերությունը օխրան է վարդագույնի փոխարեն և գրքերի վրայի տեքստերը, իսկ ամենակարևորը՝ կատարման այլ ոճը և ավետարանիչների դեմքերի այլ պատկերատիպը: Այս մանրանկարները ստեղծող վարպետը, ինչպես և մասնավորապես մեր ձեռագրի հեղինակը, ավելի մեծ չափով օգտագործել է դեմքերի մոդելավորման մեջ գունաստվերը, գեղանկարչության բազմաշերտությունը, տոնային մոդելավորումը զեյթունի կանաչ երանգներով, որոնք բնորոշ էին Ղրիմի հայ մանրանկարիչների գեղանկարչությանը և գալիս էին բյուզանդական արվեստից[5] (նկ. 18):

Տիտղոսաթերթերում[6] (նկ. 2, 4, 7, 8, 22-25) տարբերությունները վերաբերում են ավետարանիչների խորհրդանշաններով գլխատառերին: Մեր ձեռագրի Մարկոսի ավետարանի տիտղոսթերթի օրինակ-նմուշը (նկ. 4) օգտագործված է Ղուկասի ավետարանի տիտղոսաթերթի համար (նկ. 20): Տիտղոսաթերթի նմանօրինակ նմուշ հանդիպում է նաև 1290 թ. Մ. № 5736 Ավետարանում (էջ 154 ա) և Գրիգոր Պիծակի 1297 թ. Մ. № 7663 Ավետարանում (էջ 187 ա, նկ. 17) թռչունների արդեն «միասնականացված» պատկերներով, որոնք հարազատ են մեր ձեռագրին և յուրացված են Սարգիս Պիծակի կողմից[7]: Եվ վերջապես բոլոր այս ձեռագրերի տիտղոսաթերթերը հանգեցնում են Պիծակի տիտղոսաթերթերին (տե՛ս 1325 թ. Մ. № 10449 Ավետարանը, 1336 թ. Մ. № 5786 Արքունական Ավետարանը կամ 1352 թ.Մ. № 7631 Ավետարանը[8]):

---

[1] Տե՛ս Buschchausen H. und H., op. cit., Taf. XXI, Abb.40, 41 (Մտթ. և Ծնունդ՝ գունավոր), Taf. 90, 91, Abb. 364-367 – Ավետարանիչներ, Abb. 368-371 – անվանաթերթեր:

[2] Idem, Taff. XX, Abb. 36, 37 (Ղուկաս և Թեոփիլոս, Գայթակղություն՝ գունավոր), Taff. 77, Abb. 312-315 (4 ավետարանիչներ), Taff. 78, Abb. 316-319 (անվանաթերթեր).

[3] Տե՛ս Buschhausen H. und H., Korchmasjan E., op. cit., S. 57. Այստեղ պատկերների ցուցակի աղյուսակում մեր ձեռագրի հետ նմանության հիման վրա № 318 Ավետարանը վերագրված է ենթադրաբար Սարգիս Պիծակին և թվագրված է XIV դ. կեսերով, իսկ որպես աղբյուր դրա համար նշված է՝ Ա. Գէորգեան, Անանուն հայ մանրանկարիչներ. մատենագիտություն (IX-XVII դդ.), Գահիրէ, 2005, № 773, էջ 556 (համարը և էջը սխալ են նշված, պետք էր նշել էջ 162, № 233): Ա. Գէորգեանն իր հերթին ձեռագիրը Սարգիս Պիծակին վերագրելու հարցում հենվել է «Ցուցակ ձեռագրաց», հ. Ա, էջ 297: Նույն տեղում, էջ 82-ում մեր ձեռագրի նման երկրորդ № 7699 Ավետարանը թվագրված է XIV դ. կեսերով և որպես աղբյուր նույնպես նշված է Ա. Գէորգեան, նշվ. աշխ., № 454, էջ 316, իսկ որպես ավելի ուշ ժամանակի գրիչ սխալ նշված է 1582 թ. Պողոս Եպիսկոպոս Մելտինցին, որն իրականում կազմողն էր:

[4] Տե՛ս Buschhausen H. und H., Korchmasjan E., op. cit., Taf. XXI, Abb. 40, Taf. 90, Abb. 365, 366, 365.

[5] Տե՛ս Дурново Л. А., Армянская миниатюра. Ред. и пред. Р. Г. Дрампяна. Е., 1967, с. 222; Корхмазян Э. М., Армянская миниатюра Крыма (XIV-XVII вв.), Е., 1978, с. 21-70; Корхмазян Э., Миниатюра армянских колоний, Крым, Армянская миниатюра. Коллекция Матенадарана, Е., 2011, с. 54-56.

[6] Տե՛ս Buschhausen H. und H., Korchmasjan E., op. cit., Taf. 91, Abb. 368-371.

[7] Տե՛ս Казарян В.О, Манукян С.С., նշվ. աշխ., էջ 201:

[8] Տե՛ս նույն տեղում, էջ 204, պ. 383, էջ 215, պ. 402:

Մ. № 7699 Ղրիմի Ավետարանում[1] (նկ. 26-33) ավետարանիչների պատկերագրությամբ և անվանաթերթերի հորինվածքներով մեր ձեռագրից տարբերվում է միայն Ղուկասի դիմանկարը (նկ. 6, 28), պատկերված Թեոփիլոսի հետ՝ մի տարբերակ, որը բնորոշ էր XIII դ. կիլիկյան մանրանկարներին[2]: Հիմնական տարբերություններն այստեղ նույնպես վերաբերում են դեմքերի պատկերատիպերին և կատարման ոճին: Այս Ավետարանում, համեմատած Սարգիս Պիծակի (նկ. 13-17) և նույնիսկ մեր ձեռագրի հետ, ավելի ցայտուն է գեղանկարչական մոդելավորումը (նկ. 28): Դեմքերի համար օգտագործված են զեյթունի կանաչ տոների երանգները, պակաս սխեմատիկ և ավելի ճկուն փափուկ գիծը, ինչը փաստում է, որ այստեղ կիլիկյան օրինակով աշխատել է տեղացի հայ վարպետը, քանի որ սյուժետային մանրանկարները, ինչպես և Մ. № 318 Ավետարանում, նույնպես նկարված են ղրիմահայ մանրանկարչի ձեռքով[3]:

Ի մի բերելով մեր համեմատական քննության արդյունքները՝ հանգեցինք հետևյալ եզրակացություններին.

ա. № 9510 Ավետարանը ստեղծվել է կիլիկյան արվեստի 1290 թ. - XIV դ. սկիզբ ձգվող «անցումային» շրջանում՝ մինչև Սարգիս Պիծակի գործունեության ժամանակը:

բ. Գոյություն է ունեցել Ավետարանի կիլիկյան օրինակ-նմուշ, որն ամբողջությամբ կամ հատվածաբար ընդօրինակվել է ինչպես այդ ժամանակ, այնպես էլ ավելի ուշ Պիծակի և Ղրիմի հայ մանրանկարիչների կողմից:

գ. Հենց մեր Մ. № 9510 Ավետարանը՝ այդ օրինակներից ամենահինը, եղել է այդ նմուշ-օրինակը: Կիլիկիայից գաղթողներն այն տարել են Ղրիմ, որտեղ ևս, ինչպես տեսանք, երկու անգամ ընդօրինակվել է:

դ. Ղրիմից մեր ձեռագիրը, թուրքերից դեպի Ռումինիա փախչող հայերի միջոցով, տեղափոխվել է Բոթոշան, որտեղ, ինչպես գիտենք, ձևավորվել է մեծ հայկական համայնք[4]: Իսկ XX դ. երկրորդ կեսին Բոթոշանից ձեռագիրն ուղարկվել է Երևան:

Քննված՝ Մ. № 9510 Ավետարանի ոդիսականը թույլ է տալիս նաև կատարել հետևյալ եզրակացությունները. 1. Հայերեն ձեռագրեր Ղրիմ են բերվել Կիլիկիայից: Այստեղ նրանք ծառայել են հայկական համայնքի նկարիչների համար որպես ոգեշնչման աղբյուր և ընդօրինակման կամ նմանակման նմուշներ: 2. Հայերեն ձեռագիր գրքերը Ռումինիա են հասել են Ղրիմի հայերի միջոցով, որոնք այստեղ են տեղափոխվել որպես ավելի ապահով երկիր: 3. Ռումինահայոց մշակույթը իր արմատներով սերել է Ղրիմի հայերի արվեստից և գտնվել է նրա հետ մի ընդհանուր մշակութային դաշտում:

Сейрануш Манукян, ЕВАНГЕЛИЕ № 9510 МАТЕНАДАРАНА В ЕРЕВАНЕ, ПРИСЛАННОЕ В ДАР РУМЫНСКИМИ АРМЯНАМИ. В статье всесторонне исследуются иллюстрации Евангелия № 9510 Матенадарана, присланного в дар румынскими армянами. Изучение рукописи свидетельствует о том, что иллюстрации похожи на миниатюры Саркиса Пицака, однако созданы до времени творчества Пицака – в «переходный период» киликийской миниатюры 90-х годов XIII века – начала XIV

[1] Տե՛ս Buschhausen H. und H., Korchmasjan E., op. cit., Taf. XX, Abb. 36, Taf. 77, Abb. 312, 313, 315, Taf. 78, Abb. 316-319.

[2] Տե՛ս Der Nersessian S., նշվ. աշխ., h. 2, պ. 292, 321, 355, 401, 402:

[3] Տե՛ս Buschhausen H. und H., Korchmasjan E., op. cit., S. 82.

[4] Հայերի Մոլդավիայում հայտնվելու ճանապարհների, այստեղ գոյատևելու և նրանց տեղաշարժերի մասին տե՛ս Mutafian C., La Saga des Armeniens de l'Ararat aux Carpates, Paris, 2018, 447 pp. Հայերը Ռումինիայում նախևառաջ հաստատվում են Բոտոշանում, որտեղ 1350 թ. կառուցվում է սուրբ Աստվածածին հայկական եկեղեցին: Տե՛ս Florin Simion Egner, Viorica Popa, Istoria comunitatii armenilor din Botosani (1045-2012), Botosani, 2012, 114 pp և Florin Simion Egner, Viorica Popa, Biserica armeana din Botosani o existenta de peste sapte secole, Botosani, 2012, p. 10-12: Այստեղ տրված է Բոտոշանին վերաբերող ողջ գրականությունը, այդ թվում բերված են Հակոբ Սիրունու և Նիկոլաե Յորգայի աշխատությունները: Ամբողջական տվյալներ «հայկական» Բոտոշանի մասին տե՛ս նաև Florin Simion Egner, Viorica Popa, Patrimoniul cultural si religios al comunitatii armene si al parohiei bisericii ortodoxe armene din Botosani, Botosani, 2013, p.5-51 և հատկապես Florin Simion Egner, Viorica Popa, Din istoria si patrimonial comunitatii armene din Botosani, Botosani, 2014, vol. 1, p. 9-15, 36-45, …, 149-152, 504.

века. Евангелие № 9510 Матенадарана являлось образцом-прототипом для ряда рукописей Саркиса Пицака, а также Евангелий № 318 և № 7699 Матенадарана, иллюстрированных армянскими миниатюристами Крыма. Из Крыма рукопись была перевезена в Румынию, в город Ботошан. А в середине XX века она была прислана в Ереван. «Одиссея» рассматриваемого Евангелия № 9510 Матенадарана выясняет и подтверждает следующие исторические реалии:

1. В Крым рукописи привозились из Киликии. Здесь они служили источником вдохновения и образцами-прототипами для миниатюристов армянской общины; 2. В Румынию армянские рукописные книги попадали посредством крымских армян, переселяющихся сюда как в более безопасную страну; 3. Румыно-армянская культура уходила корнями в искусство крымских армян и находилась с ним в едином культурном ареале.

Ключевые слова: рукопись, армянская миниатюра, «переходный период», армянский, образец-прототип, иконография, Крым, румынские армяне.

Seyranush Manukyan, GOSPEL № 9510, DONATED TO MATENADARAN OF YEREVAN BY THE ARMENIANS OF ROMANIA. This article multilaterally studies the illustration of the Gospel № 9510 donated to Matenadaran by Armenians of Romania. The investigation shows that it is similar to the manuscripts illustrated by Sarkis Pitzak, but it was done before Pitzak, in the 'transitional period of Cilician miniature between the 1290s and the beginning of the 14th century'. The Gospel served as model for a series of manuscripts illuminated later by Pitzak and Armenian miniature painters of the Crimea as Gospels № 318 and № 7699 now kept in Matenadaran. The manuscript was taken from the Crimea to the Romanian town of Botoshan; in the second half of the 20th century it was transferred to Yerevan. The odyssey of the Gospel № 9510 gives evidence and confirms the facts that:

1. Manuscripts were brought to the Crimea from Cilician Armenia. There they served as source of inspiration and models for the Armenian miniature painters. 2. The manuscripts were brought from Crimea to Romania by migrant Armenians who moved there to live in a safer country. 3. The Armenian culture of Romania has its roots in the art of the Crimean Armenians and was in a common cultural field with it.

Key words: manuscript, Cilician miniature, «transitional/ period, Armenian, model, iconography, Crimea, Romanian-Armenians.



1.Ավետարան Մ. № 9510, Մատթեոսի դիմանկարը, էջ 7բ

2. Ավետարան Մ. № 9510, Մատթեոսի անվանաթերթը, էջ 8ա



3. Ավետարան Մ. № 9510 , Մարկոսի դիմանկարը, էջ100բ

4. Ավետարան Մ. № 9510 , Մարկոսի անվանաթերթը, էջ 101ա



5. Ավետարան Մ. № 9510, էջ 115բ

6. Ավետարան Մ. № 9510, Ղուկասի դիմանկարը, էջ 158բ

7. Ավետարան Մ. № 9510, Ղուկասի անվանաթերթը, էջ 159ա



8. Ավետարան Մ. № 9510, Հովհաննեսի դիմանկարը Պրոքորոնի հետ, էջ 258բ



9. Ավետարան Մ. № 9510, Հովհաննեսի անվանաթերթը, էջ 259ա



10. Ավետարան Մ. № 197, 1289, Մատթեոսի դիմանկարը, էջ 13բ

11. Ավետարան, (Beirut, Arisdaghesian Coll.), № 1297, Մարկոսի դիմանկարը, էջ 104բ

12. Ավետարան Մ. № 9450, XIII դ. վերջ-XIV դ. սկիզբ, Ղուկասի դիմանկարը, էջ 176բ



13. Նոր Կտակարան Մ. № 242, 1317-1318, Հովհաննեսը Պրոքորոնի հետ, էջ 137բ



14. Ավետարան Մ. № 7631, 1352, Մատթեոսի դիմանկարը, էջ 17բ, Սարգիս Պիծակ



15. Ավետարան (A. Balat-Istanbul), № 1325, Մարկոս, էջ 111բ, Սարգիս Պիծակ

16. Ավետարան Երուսաղեմ № 1930, Ղուկասի դիմանկարը, էջ 324բ, Սարգիս Պիծակ

17.Ավետարան Մ. № 7663, 1297, Ղուկասի նվանաթերթը, էջ 187ա, Գրիգոր Պիծակ

18.Ավետարան Մ. № 318, Ղրիմ, XIV դ. կես, Մատթեոսի դիմանկարը, էջ 1բ

19.Ավետարան Մ. № 318, Ղրիմ, XIV դ. կես, Մարկոսի դիմանկարը, էջ 88բ

20. Ավետարան Մ. № 318 , Ղրիմ, XIV դ. կես, Ղուկասի դիմանկարը, էջ 146բ



21.Ավետարան Մ. № 318, Ղրիմ, XIV դ. կես, Հովհաննեսը Պրոքորոնի հետ, էջ 240բ

22. Ավետարան Մ. № 318, Ղրիմ, XIV դ. կես.Մատթեոսի անվանաթերթը, էջ 2ա

23.Ավետարան Մ. № 318, Ղրիմ, XIV դ. կես, Մարկոսի անվանաթերթը, էջ 89ա

24.Ավետարան Մ. № 318, Ղրիմ, XIV դ. կես, Ղուկասի անվանաթերթը, էջ 147ա

25. Ավետարան Մ. № 318, Ղրիմ, XIV դ. կես, Հովհաննեսի անվանաթերթը, էջ 241ա

26.Ավետարան Մ. № 7699, Ղրիմ, XIV դ. կես, Մատթեոսի դիմանկարը, էջ 13բ



27.Ավետարան Մ. № 7699, Ղրիմ, XIV դ. կես, Մարկոսի դիմանկարը, էջ 99բ

28.Ավետարան Մ. № 7699, Ղ-րիմ, XIV դ. կես, Ղուկասը Թեոփիլուսի հետ, էջ 155բ

29.Ավետարան Մ. № 7699, Ղ-րիմ, XIV դ. կես, Հովհաննեսը Պ-րոքորոնի հետ, էջ 244բ



30.Ավետարան Մ. № 7699, Ղ-րիմ, XIVդ. XI դ. կես, Մատթեոսի անվանաթերթը, էջ 14ա

31. Մ. № 7699, Ղրիմ, XIV դ.կես, Մարկոսի անվանաթերթը, էջ 100ա

32. № Մ. 7699, Ղրիմ, XIV դ. կես, Ղուկասի անվանաթերթը, էջ 156ա

33. Մ. № 7699, Ղրիմ, XIV դ. կես, Հովհաննեսի անվանաթերթ, էջ 245ա